ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 28 2025 № 1

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ETHNOGRAPHY

ՀՏԴ՝ 069:39(=19):008
DOI: 10.52971/18294316-2025.28.1-140

ԿԱՎԵ ԿԱՆԱՑԻԱԿԵՐՊ ԱՂԱՄԱՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ՝ ՀՈՎՀ. ՇԱՐԱՄԲԵՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Դիանա Վ. Աբրահամյան
Հովհ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան, Երևան, ՀՀ

Ամփոփում
Նախաբան. Սույն հոդվածում քննվում է կանացիակերպ աղամանների պատմական զարգացման ընթացքը, դրանց պատրաստման տեխնոլոգիաների, կերպավորման առանձնահատկությունների և գործառույթների փոփոխությունները Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի հավաքածուի հիման վրա (հետայսու՝ ԺԱԹ): *Մեթոդներ և նյութեր.* Համադրելով կանացիակերպ աղամանների ուսումնասիրության ազգագրական մոտեցումները և թանգարանային հավաքածուում առկա էմպիրիկ նյութը՝ պատմահամեմատական և մշակութաբանական մեթոդների կիրառմամբ փորձել ենք պարզել հավաքածուի ձևավորման պատմությունը, տալ դրանց տիպաբանական ընդհանուր բնութագիրը և սոցիալ-մշակութային մեկնաբանությունը: *Վերլուծություն.* Հոդվածում դիտարկվել են շուրջ 40 կավե կանացիակերպ աղամանների նմուշներ, որոնց մեծ մասը քննության է առնվում առաջին անգամ: *Արդյունքներ.* Թանգարանի հավաքածուի ավելի քան 40 աղամանների ուսումնասիրությունը, որոնք ներկայացնում են Հայաստանի տարբեր տարածաշրջաններ և ներառում են ինչպես ազգագրական, այնպես էլ դեկորատիվ արվեստի նմուշներ, բացահայտեց դրանց ոճական և տեխնոլոգիական առանձնահատկություններն ու ընդհանրությունները: Ի սկզբանե կանանց կողմից պատրաստվող այս առարկաները, տղամարդկանց ներգրավմամբ տնայնագործական արհեստից մասնագիտական արհեստի վերածվելու հետևանքով, փոխեցին արհեստի սեռային պատկանելիությունը՝ հանգեցնելով ձևերի և ոճերի նոր, այլընտրանքային տարբերակների առաջացման: Այս փոփոխությունները նպաստեցին կանացիակերպ աղամանների վերափոխմանը՝ դրանք դարձնելով դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ:

Հետազոտության շրջանակում ավանդական և ժամանակակից կանացիակերպ կավե աղամանների համեմատական վերլուծությունը հնարավորություն է տվել հասկանալ տարբեր ժամանակաշրջանների գեղարվեստական պատկերացումները և մշակութային ընկալումները, ինչպես նաև ընդգծել դրանց միջև գոյություն ունեցող շարունակական կապը, որն արտահայտվում է կնոջ կերպարի պահպանմամբ՝ իր մշակութային նշանակությամբ և սիմվոլիկայով:

Բանալի բառեր՝ *կանացիակերպ աղամաններ, խեցեգործություն, թանգարան, հավաքածու, ավանդական, ժամանակակից, ժող-վարպետ:*

Ինչպես հղել՝ Աբրահամյան Դ. *Կավե կանացիակերպ աղամանների պատմական զարգացման դինամիկան՝ Հովհ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի օրինակով,* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2025: Հ. 1(28): 140-153 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-140

THE DYNAMICS OF THE HISTORICAL DEVELOPMENT OF WOMANLIKE CLAY SALT CELLARS, AS AN EXAMPLE OF THE COLLECTION OF THE FOLK ARTS MUSEUM NAMED AFTER HOVH. SHARAMBEYAN

Diana V. Abrahamyan

Museum of Folk Arts named after Hovh. Sharambeyan, Yerevan, RA

Abstract

Introduction: This article explores the historical development of womanlike salt cellars, the changes in their making technologies, peculiarities of characterisation and functions based on the collection of the Hovhannes Sharambeyan Museum of Folk Arts (hereafter: MFA). *Methods and materials:* By combining ethnographic approaches to the study of womanlike salt cellars with the empirical material available in the museum collection and using historical-comparative and culturological methods,we attempted to uncover the history of the collection's formation, provide a general typological description and offer a socio-cultural interpretation. *Analysis:* In this article, around 40 samples of womanlike clay salt cellars were examined, most of which have been studied for the first time. ***Results:*** The examination of over 40 salt cellars from the museum's collection, representing various regions of Armenia and encompassing both ethnographic and decorative art pieces, revealed their stylistic and technological characteristics as well as their common features. Originally crafted by women, these objects, with the involvement of men, transitioned from a domestic craft to a professional craft, altering the gender dynamics of the trade and leading to the emergence of new, alternative forms and styles. These changes contributed to the evolution of womanlike salt cellars, transforming them into decorative applied art pieces.

Within the scope of this research, the comparative analysis of traditional and contemporary womanlike clay salt cellars has provided insight into the artistic visions and cultural perceptions of different periods, while also highlighting their continuous connection, manifested in the preservation of the female figure with its cultural significance and symbolism.

Key words: *womanlike salt, pottery, museum, collection, traditional, contemporary, folk artisan*.

Citation: Abrahamyan D. *The Dynamics of The Historical Development of Womanlike Clay Salt Cellars, as an Example of The Collection of The Folk Arts Museum Named After Hovh.Sharambeyan.*//"Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2025,Vol. 1(28).140-153pp.
DOI: 10.52971/18294316-2025.28.1-140

ՆԱԽԱԲԱՆ. Ի տարբերություն միջնադարյան խեցեգործության արհեստի ուսումնասիրության (տե՛ս [1:2:3]), որտեղ ներկայացվում է խեցեգործության զարգացման ու տեխնոլոգիական առանձնահատկությունների պատմությունը՝ հիմք դնելով հետագա հետազոտությունների համար, 19-20-րդ դարերի ժողովրդական խեցեգործությունը որպես արհեստ մշակութաբանական վերլուծության չի ենթարկվել, բացառությամբ Վարդ Բդոյանի և Ելենա Սարգսյանի կողմից իրականացված ազգագրական ուսումնասիրությունների (տե՛ս [7:17]), որոնցում, խեցեգործությունը դիտարկվում է որպես տարածված արհեստ՝ պայմանավորված խեցեգործության ավելի շատ որպես տեղական արհեստ ընկալմամբ, որը կապված է եղել գյուղական կյանքին և մեծ մասամբ գոյություն է ունեցել գործնական նպատակներով [15, էջ 240], քան որպես արվեստի մի ձև, որը կրում է մշակութային կամ գեղարվեստական բնույթ։ Այդպես, խեցեգործությունը շատ դեպքերում դիտվել է որպես « պրիմիտիվ» [1, էջ 212], տնտեսություն սպասարկող ոլորտ՝ ուշադրություն չդարձնելով նրա դերին՝ որպես ժամանակի արժեքներն ու ավանդույթները արտացոլող մշակութային հենքի։ Այս առումով կանացիակերպ աղամանների՝ որպես խեցեգործական արտադրանքի առանձին տեսակի ուսումնասիրությունը դեռևս սահմանափակ է և պահանջում է նոր մեթոդաբանություն և անդրադարձ:

Մեր հետազոտությունը նպատակ ունի քիչ թե շատ լրացնել առկա գիտական բացերը՝ ուսումնասիրելով այս յուրօրինակ մշակութային նմուշների զարգացումը և դրանց նշանակությունը հայ ժողովրդի գեղարվեստական և սոցիալ-մշակութային կյանքում։ Ցավոք, հետազոտվող հավաքածուի ձևավորման ընթացքում նմուշների գիտական նկարագրության նկատմամբ բավարար ուշադրություն չի դարձվել։ Շատ դեպքերում անհայտ են նմուշների հեղինակները, իսկ դրանց փոխարեն գրանցվել են միայն հանձնողների տվյալները։ Բացի այդ, հիմնականում չեն փաստագրվել նմուշների ստեղծման պատմությունը, վարպետների կենսագրական տվյալները և դրանց ստեղծման տեխնիկական առանձնահատկությունները։ Այս բացթողումները որոշ չափով սահմանափակել են հավաքածուի գիտական նշանակության լիարժեք բացահայտումը և նմուշների ստեղծման համատեքստի խորը վերլուծությունը։ Այնուամենայնիվ, մեզ հաջողվել է պարզել ինչպես հավաքածուի տարածաշրջանային պատկանելիությունը, այնպես էլ տիպաբանել և ուրվագծել կանացիակերպ աղամանների զարգացման փուլերը։ Այս ուսումնասիրությունը կօգնի ոչ միայն մասամբ լրացնելու գիտական բացերը, այլև վերարժևորել կանացիակերպ աղամանների դերն ու նշանակությունը հայ ժողովրդական արվեստում՝ այն դիտարկելով որպես արհեստագործական և գեղարվեստական ավանդույթների շարունակականության խորհրդանիշ։

Հայկական խեցեգործության ավանդույթները.

կանացիակերպ աղամանների ծագումն ու էվոլյուցիան

Հայկական լեռնաշխարհում կավե ամանների պատրաստման ավանդույթը սկիզբ է առնում դեռևս նեոլիթի շրջանում, երբ ձևավորվում են վաղ ագրարային համայնքները։ Այս

շրջանից հայտնի են ձեռքով կերտված և բաց կրակով թրծված խեցեղեններ, որոնք հետագայում, հատկապես էնեոլիթի (մ.թ.ա. 6-4-րդ հազարամյակ) և բրոնզի դարերում (մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակ), նստակեցության (տե՛ս [11]), հետևաբար սնունդ արտադրող տնտեսության անցմամբ պայմանավորված՝ կատարելագործվել են՝ձեռք բերելով ավելի բազմազան ձևեր, զարդանախշեր և տեխնոլոգիական որակներ: Ինչպես հայտնի է, առաջին կավագործները եղել են կանայք, որոնք սննդամթերքի ավելցուկը և սննդի տարբեր տեսակների պաշարը պահպանելու համար պատրաստել են առաջին կավանոթները [6, էջ 54]: Խեցե իրերի այս տեսակներին բնորոշ է հիմնականում կոպիտ և ոչ համամասնական չափերի «իրանը», սակայն հանդիպում են նաև իրենց կատարելությամբ արվեստի գործեր հիշեցնող կավանոթներ: Դրանք կանացիակերպ աղամաններն են, որոնց ամենավաղ նմուշը գտնվել է բարձր միջնադարի հնագիտական շերտերից (Անիի հյուսիսային արվարձանների պեղումների ժամանակ) և թվագրվում է 13-րդ դարով (Տե՛ս [9]): Կանացիակերպ աղամանները ավանդական տարբերակում ձեռածեփ էին և պատրաստվում էին կանանց կողմից: Դրանք պատրաստվում էին օղակաձև ծեփման տեխնիկայով, իսկ հարդարվում՝ կոկման եղանակով [15, էջ 208]: Հարկ ենք համարում նշել, որ դրանց նախատիպ են հանդիսանում կավե կանացիակերպ անոթները, որոնք առավելապես հայտնի են մերձավորարևելյան մշակույթներում, որտեղ կնոջ կերպարի օգտագործումը կրկին կապվում էր պտղաբերության, մայրության պաշտամունքի հետ: Հայկական տարածքում հայտնաբերված ամենավաղ նմանատիպ կավե անոթները թվագրվում են մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներով: Դրանք գտնվել են թաղման վայրերում, ինչը ենթադրում է, որ կապված են եղել մահվան ու վերածնդի հնագույն պատկերացումների հետ: Դրանց օրինակներից այսօր կարող ենք տեսնել Հայաստանի պատմության թանգարանում, որոնցից կարելի է առանձնացնել Շենգավիթում՝ Երևան քաղաքի հարավարևմտյան շրջանում գտնվող հնագույն բնակավայրից պեղված, 3-րդ հազարամյակով թվագրվող կանացիակերպ անոթը: Այն ունի պարզ ձև, վերին մասում կնոջ պատկերավորմամբ, որը խորհրդանշում է մայրությունը՝ որպես կյանքի աղբյուր:

Կանացիակերպ աղամանները ժամանակի ընթացքում անցել են դինամիկ զարգացում և ադապտացվել կրոնա-մշակութային փոփոխություններին՝ կրելով ժամանակաշրջանի առանձնահատկությունները [7, էջեր 60-64]: Մինչքրիստոնեական շրջանում այս կավանոթները կապված էին պտղաբերության պաշտամունքի հետ: Քրիստոնեության տարածմամբ կավե անոթները ենթարկվեցին սրբացման, ինչը ձևափոխեց դրանց խորհրդանշային իմաստը և ձևաբանական կառուցվածքը: Այս փուլում նկատելի է Անահիտի պաշտամունքի ծպտյալ շարունակականությունը, ինչը արտահայտվել է կանացի հատկանիշների ընդգծմամբ: Այս շրջանում է, որ անոթի վերին հատվածում ձևավորվում է կանացի դիմագիծ, իսկ նոր բացվածքը տեղակայվում է կրծքի ներքևի մասում: Հաջորդ շրջանում կավանոթը դառնում է սրբազանության խորհրդանիշ՝ կրելով ինչպես մինչքրիստոնեական, այնպես էլ քրիստոնեական արժեքներ: Այն արդեն մարմնավորում էր միաժամանակ Անահիտի և Մարիամ Աստվածածնի կերպարները՝ միավորելով մայրության և սրբության գաղափարները: Այս շրջանը պսակվում է Անահիտի մոռացումով և «մարիամապաշտության» [7, էջ 64] հաղթանակով: Ավելի ուշ, աղամանները ձերբազատվում են կրոնական իմաստից և ձեռք բերում աշխարհիկ նշա-

նակություն՝ վերածվելով դեկորատիվ կավանոթների՝ աստիճանաբար կորցնելով իրենց օգտապաշտական բնույթը։Այսօր դրանք դարձել են ինքնության ցուցիչ՝ արտացոլելով հայ մշակույթի և ազգային ինքնության յուրահատկությունները։ Այս զարգացումն ընդգծում է, որ աղամանները, թեև ենթարկվել են գաղափարական և խորհրդանշական փոփոխությունների, սակայն երկար ժամանակ պահպանել են իրենց գործառույթային էությունը՝ վերաիմաստավորվելով տարբեր մշակութային համատեքստերում։

Արևելյան Հայաստանում կանացակերպ աղամանների ստեղծման և տարածման ավանդույթը կապված է 19-20-րդ դարերում արևմտահայության մշակութային ազդեցության հետ։ Գաղթի արդյունքում արևմտահայերի համայնքները նոր միջավայրերում պահպանեցին և վերաիմաստավորեցին իրենց մշակութային արժեքները, որտեղ ներառված էին նաև կանացիակերպ աղամանների պատրաստման ավանդույթները։ Պատահական չէ, որ այս աղամանները հատկապես հանդիպում ենք այն վայրերում, որտեղ 1830-ական թվականներից սկսած՝ շարունակաբար վերաբնակվել են արևմտահայերի համայնքները [7, էջ 20։ 16]։ Արդյունքում արևմտահայերի տեղահանությունը հանգեցրեց մշակութային փոխանակման, որտեղ Արևելյան Հայաստանի տեղական ավանդույթներն ու Արևմտահայաստանի կենցաղային և գեղարվեստական սովորույթները միաձուլվեցին, իսկ արդեն 20-րդ դարի ընթացքում՝ հատկապես խորհրդային շրջանում, կանացիակերպ աղամանները դարձան ազգային ինքնության արտահայտման միջոց։ Այս գործընթացն արտացոլում է ոչ միայն նյութական մշակույթի տարրերի փոխանցումը, այլև մշակութային հիշողության պահպանման և տեղային ինքնությունների վերաձևավորման դինամիկան։

20-րդ դարի կեսերից և դրանից հետո կերպավոր աղամանների պատրաստումը անհատական տնտեսություններում անասունների գլխաքանակի կրճատմամբ պայմանավորված աստիճանաբար վերացավ [7, էջ 3]՝ մնալով ժողովրդական վարպետների ստեղծագործական ներշնչման առարկա։ Աղամանները դարձան դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ, ընդգծելով առավելապես էթնիկ մշակույթի բաղադրիչը, և հանդես գալով որպես հայ ինքնության ցուցիչ։ Այս անցման ընթացքում նկատվեց նաև մեկ այլ կարևոր փոփոխություն. եթե մինչ այդ աղամանների պատրաստումը կանանց զբաղմունք էր՝ կապված կենցաղային կարիքների հետ, ապա արհեստի վերածվելու հետևանքով դրանց պատրաստման գործընթացն աստիճանաբար կենտրոնացավ տղամարդ վարպետների ձեռքում։ Կավագործության, մասնավորապես՝ կերպավոր աղամանների պատրաստման մասնագիտացումը նպաստեց դրանց արտադրության ընդլայնմանը և որակական կատարելագործմանը։ Վարպետները սկսեցին ավելի մանրամասն մշակել ձևերը, ավելացնել հարդարանքային տարրեր՝ զարդանախշեր, փորագրություններ և գունային լուծումներ, ինչի արդյունքում աղամաններն առավելապես ձեռք բերեցին գեղարվեստական նշանակություն։ Այս գործընթացը աղամաններին հաղորդեց առևտրային արժեք, և դրանք սկսեցին ոչ միայն գործածվել որպես կենցաղային կամ ծիսական անոթներ, այլև վաճառվել որպես գեղարվեստական առարկաներ։ Ժողովրդական վարպետները սկսեցին ակտիվորեն ներգրավվել այս արտադրության մեջ, զարգացնելով նոր ոճեր և տեխնիկաներ, որոնք արտացոլում էին հայ մշակութային ինքնության յուրահատկությունները։ Արդյունքում, աղա-

մանների պատրաստման ավանդույթն ապրանքայնացավ, իսկ դրանց գործառույթը վերափոխվեց՝ վերածվելով ոչ միայն ազգային ինքնության խորհրդանիշի, այլև ժողովրդական արհեստի կենսունակ և զարգացող ճյուղի։

ԺԱԹ-ի հավաքածուն ընդգրկում է 19-20-րդ դարերով թվագրվող 40-ից ավելի աղաման, որտեղ ներառված են ինչպես ազգագրական, այնպես էլ դեկորատիվ արվեստի նմուշներ։ Այդ աղամանները ներկայացնում են Հայաստանի տարբեր տարածաշրջանները և ունեն ոճական, տեխնոլոգիական առանձնահատկություններ ու ընդհանրություններ։ Հավաքածուն ձևավորվել է սկսած 1970-ական թվականներից, երբ Հ. Շարամբեյանի նախաձեռնությամբ նախկին Ժողովրդական տան շենքը վերածվում է թանգարանի։ Հավաքածուում առկա ազգագրական տիպի աղամանները հիմնականում Շարամբեյանի անձնական հավաքածուից են՝ բերված Դիլիջանից։ Ըստ մեր հետազոտության ընթացքում ձեռք բերված տեղեկությունների՝ նմուշների զգալի քանակ ձեռք է բերվել նաև 1980-ական թվականներին՝ գիտարշավների ընթացքում՝ Արարատի շրջանից և հիմնականում՝ գնման միջոցով։ Հետևաբար դրանք պատկանում են Ապարանի, Յուվայի (այժմ՝ գ. Շահումյան) և Երևանի աղամանների տիպին, քանի որ դարասկզբին այդ շրջանների կավագործ կանայք և բրուտները աղամանները վաճառել են Արարատյան հովտում [7, էջ 3]։ Հավաքածուում կավե կանացիակերպ աղամանները յուրահատուկ տեղ են զբաղեցնում՝ արտացոլելով հայոց ավանդական կենցաղի և մշակույթի գեղարվեստական կողմերը։

Հավաքածուի տիպաբանական նկարագրություն

Հայկական կավե աղամանները՝ մարդակերպ թե կենդանակերպ, պարտադիր ունեն կանացի հատկանիշներ [7, էջ 15] և խիստ կապված են կանացիության, մայրության և պտղաբերության գաղափարական պատկերացումների հետ, որոնցով և տարբերվում են այլ մշակույթներում հայտնի նմանատիպ՝ փորի բացվածքով անոթներից, որոնք հիմնականում ներկայացնում են տեղային աստվածություններ, և կարող էին լինել նաև տղամարդկային կերպարով։

Թեև հավաքածուում առկա ավանդական տիպի աղամանները ժամանակի ընթացքում քայքայվել են, ինչը բարդացրել է դրանց քննությունը, սակայն համադրական ուսումնասիրության միջոցով, մեզ հաջողվել է որոշ օրինակներ տիպաբանել։

Հետազոտության առարկա աղամանները պատրաստված են սև, կարմիր և կարմրամոխրագույն-բացշագանակագույն կավահումքից։ Ելնելով Վ. Բդոյանի դասակարգումից՝ ԺԱԹ-ի հավաքածուում առկա կանացիակերպ աղամանները կարելի է խմբավորել ըստ կերպավորման՝ մարդակերպ (կանացի դիմավոր և անդեմ), կանացիակերպ-գմբեթավոր, կանացիակերպ-կենդանակերպ և կանացիակերպ-մարդակերպ տիպերի [7, էջեր 11-15]։ Հավաքածուն ներառում է ինչպես ամբողջ հասակով ներկայացված ցուցանմուշներ, այնպես էլ կանացիակերպ անդեմ կիսանդրի հիշեցնող աղաման-արձաններ, որոնք, որպես կանոն, ժամանակագրական տեսանկյունից ավելի հին են։ Աղամանները ոճական առումով ընդգրկում են տարբեր դպրոցների [7, էջեր 8-10] նմուշներ, բացառությամբ Սասուն-հանձիթյան դպրոցի։

Հավաքածուում աչքի են ընկնում հատկապես *ԳԳ4520, ԳԳ6621* և *ՓԹ452* հաշվառանիշերով կանացիակերպ աղամանները, որոնք ներկայացնում են կնոջ բնախոսա-

կան վիճակներից ծննդաբերությունը [7, էջ 17]: *ԳԳ4520* համարով աղամանի որովայնի քևում նկատելի է ընդունված՝ իգական սեռը խորհրդանշող եռանկյանը փոխարինող կլոր ուռուցիկ նշանը, ինչը և վերջինիս առանձնահատկությունն է: *ԳԳ 6621* հաշվառանիշով Մարտունիում պատրաստած կավե անդեմ աղամանը առանձնանում է թիկունքի հատվածում անվանակիր արձանագրությամբ՝ «Բաղդագուլ», իսկ *ՓԹ452* համարով, հարուստ գեղազարդմամբ կանացիակերպ աղամանը միակ թվակիր նմուշն է՝ «1889» արձանագրությամբ: «Բաղդագուլ» անունով արձանագրությունը ցույց է տալիս պատրաստողի ինքնությունը: Վերջինս կարելի է հիմնավորել երկու հիմնական փաստարկներով՝ տեխնիկական և ազգագրական: Արձանագրությունը արվել է աղամանի պատրաստման ընթացքում՝ մինչև կավի չորանալը, ինչը երևում է դրա մեջ տեղադրման տեխնիկայից: Սա վկայում է, որ արձանագրությունը անձամբ հեղինակի կողմից է կատարվել: Բացի այդ, ազգագրագետ Մերիկ Դավթյանի կողմից արձանագրված ազգագրական նութերից մեկում հստակ նկարագրված է տվյալ աղամանի պատրաստման ընթացքը: (Տե՛ս [13])

Թանգարանի հավաքածուում ավանդական տիպի աղամաններից հետաքրքիր է դիտարկել Գառնիում՝ 1900-ական թվականներին պատրաստված դիմավոր աղամանը: Աղից քայքայված ստորին կեսը ժամանակին նորոգվել է ցեմենտի շաղախով: Դեմքը մասնակի հարթ ու գոգավոր է, իսկ գլխի հետևամասը՝ ուռուցիկ: Քիթը և վզնոցը վերադիրներ են, աչքերն ու բերանը՝ դրվագված հախճապակիներ: Պարանոցի վրա քանդակված վերադիր եռանկյունու և վզնոցի կախիկների կենտրոնում կան ակնաքարերին փոխարինող դրվագված հախճապակիներ: Կինն ունի հղիության պատրանք. ձեռքերը պտղի փայփայանք են արտահայտում: Թիկունքին փռված ծամերը հավանաբար վերջավորված են ծոպերով (*ԳԳ9206)*:

Ավանդական տիպի մեջ իր եզակիությամբ առանձնանում է նաև *ԳԳ2275* համարով անդեմ աղամանը: Այն ունի հետաքրքիր և իր տեսակի մեջ ուրույն ոճավորում: Աղամանը պատրաստված է բացշագանակագույն կավից, ունի խիստ արտահայտված կանացի հատկանիշներ՝ ստինքներ: Վերին հատվածում երևում են դեկորատիվ մանրամասներ, ինչպիսիք են դիմահայաց կողմից՝ մակերեսային զարդանախշերը, իսկ հետևում՝ ալիքաձև գծերը: Հետաքրքրական են աղամանի կողային հատվածում գտնվող, քիչ խորություն ունեցող երկու շրջանաձև անցքերը: Դրանք կարող են ունենալ և՛ գործնական, և՛ խորհրդանշական նշանակություն՝ կախված աղամանի օգտագործման և ստեղծման համատեքստից: Եթե դիտարկում ենք պտղաբերության խորհրդանիշերի տեսանկյունից, ապա այդ անցքերը կարող են խորհրդանշել ամորձիներ: Հնագույն մշակույթներում, երբեմն տղամարդու սեռական օրգանների կամ պտղաբերության մյուս խորհրդանիշերի պատկերումը օգտագործվում էր՝ ի ցույց դնելու սերնդարտադրության կարևորությունը [7, էջեր 15-17]: Ամորձիների՝ իբրև պտղաբերության հիմնական օրգաններից մեկի, կանացիակերպ աղամանների վրա պատկերելը կարող էր ծառայել ուժեղացնելու պտղաբերության կամ վերարտադրության խորհրդանշական գործառույթը այդ առարկայի համար: Մեկ այլ մեկնաբանության համաձայն՝ դրանք կարող էին լինել լրացուցիչ անցքեր՝ նախատեսված կծու պղպեղ կամ այլ համեմունքներ պահելու հա-

մար: Կարելի է դիտարկել նաև հոգևոր նշանակությունը: Հնագույն մշակույթներում անցքերը երբեմն ներկայացրել են կապը կյանքի, մահվան կամ վերածննդի հետ: Անոթների կամ ֆիգուրների վրա եղած անցքերը կարող էին օգտագործվել ծիսական գործողությունների համար, ինչպես նաև խորհրդանշել մարդու կամ աստվածայինի «կապը» արտաքին աշխարհի հետ: Եվ վերջապես, հաշվի առնելով աղամանի կառուցվածքը, դրանք կարող էին լինել պարզապես դեկորատիվ տարրեր:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ԺԱԹ հավաքածուի ժողովարպետների կողմից ստեղծված կանացիակերպ աղամանները, որոնք պատրաստված են ինչպես ավանդական մոտեցումները հաշվի առնելով, այնպես էլ անձնական ստեղծագործական մոտեցումներով: Ժամանակակից աղամանները ներկայացնում են անհատական ստեղծագործական պատկերացումներ, որտեղ վարպետները, հաճախ չօգտագործելով ավանդական խորհրդանիշեր և բնորոշ հատկանիշներ, կենտրոնանում են ավելի նորարարական ձևերի և գաղափարների վրա: Այս աղամանները աչքի են ընկնում կանացի արտահայտիչ ուրվագծերով, վարպետների կողմից առանձնահատուկ ուշադրությամբ մշակված մանրամասներով և հարուստ զարդարանքով: Եթե ավանդական տարբերակում շեշտադրվում է դրա օգտապաշտական, կենցաղային, ինչպիսին է աղի պահպանումը և ծիսական գործառույթը, ապա արդի ժամանակաշրջանում դրանք առավելապես հանդես են գալիս իբրև կիրառական դեկորատիվ արվեստի նմուշներ: Ժամանակակից կանացիակերպ աղամանները տարբերվում են ավելի աբստրակտ ձևերով ու ռճային բազմազանությամբ: Դրանք հաճախ լինում են ավելի փորձարարական՝ ընդգրկելով վառ գույներ,անսովոր կամ անհամաչափ ձևեր, մինչև անգամ պատրաստված այլ նյութերից: Այդպիսիներից է, օրինակ՝ ժողովարպետ Հարություն Խաչիկյանի կողմից պատրաստված փայտից կանացիակերպ աղամանը, որի մարմնի վրա փորագրված են երկրաչափական՝ աստղանման նախշեր, իսկ վերևի հատվածում այն ունի տղամարդու կերպար (*ԳԳ4494(ա)*): Այս աղամաններում կանացի մարմնի ուրվագծերը հաճախ ոչ այնքան իրական են, որքան խորհրդանշական և ավելի շատ էսթետիկական, քան գաղափարական: Նման օրինակ է ժողովարպետ Հրանտ Բաղդագուլյանի աշխատանքը, որն ընդունված մեկ բացվածքի փոխարեն ունի երկուսը: Աղամանը պատրաստված է մուգ գույնի կավից *(ԳԳ5689)*: Կամ մեկ այլ վարպետի՝ Սահակ Սահակյանի կողմից պատրաստված (*ԳԳ7891*) տափակ և փռված կանացիակերպ աղամանը: Չնայած դրանք երբեմն կարող են ունենալ ընդգծված տարբերություններ ավանդական կանացիակերպ աղամաններից, այնուամենայնիվ երբեմն էլ կրկնօրինակում են ավանդական մոտեցումները: Հետաքրքրական է, որ ժողովարպետների կողմից պատրաստված կավե կանացիակերպ աղամաններից շատերը ստեղծվել են Վասպուրական-ապարանյան ռճական դպրոցի մոտիվներով (ԳԳ9727): Մենք կարծում ենք, որ դա պայմանավորված է դպրոցին հատուկ հարուստ գեղազարդման առանձնահատկությամբ, ինչը կիրառական-դեկորատիվ արվեստում ունի կարևոր նշանակություն: Դրանց վառ օրինակներ են Արարատ Մարտիրոսյանի կողմից պատրաստված կավե աղամանները *(ԳԳ 8757, ԳԳ8754, ԳԳ8024, ԳԳ8037)*:

ԳԳ1975 և ԳԳ1974 հաշվառանիշերով կին և տղամարդ պատկերող կավե աղամանները ներկայացնում են տիպական ձևավորում՝ ընդգծված մարդկային կերպարով: Առաջին

աղամանը պատրաստված է տղամարդու կերպարով՝ ընդգծված աչքեր, հոնքեր և բեղեր: Կողմերի բռնակները կարծես ձեռքերն են, որոնք արտահայտում են բնական շարժում: Վերին մասը զարդարված է գունավոր հախճապակու կտորներով (ավանդական աղամանների հարդարման բնորոշ հատկանիշերից է), իսկ գագաթն ունի հարթ մակերևույթ: Առաջին հայացքից իսկ նկատելի է, որ վարպետը փորձել է ստեղծել խորհրդանշական տղամարդու պատկեր՝ դրանով «շեղվելով» ընդհանուր օրինաչափություններից: Երկրորդ աղամանի վրա նույնատիպ մարդկային դեմքը պահպանվում է, սակայն այս անգամ շեշտը դրվում է դեմքի կանացի գծերի վրա՝ թեթևակի շտկված աչքերով և շուրթերով: Նույն ձևով՝ բռնակները ձևավորում են ձեռքերը, որոնք կարծես գրկում են մարմինը: Աղամանի դիմացի կողմում գտնվող վզնոց հիշեցնող տարրերը, ինչպես նաև գունավոր զարդարանքը կանացի հագուստի զարդարանքներ են: Վարպետն այդպիսով ստեղծել է երկու սեռը ներկայացնող աղամաններ՝ յուրահատուկ կերպով համատեղելով իր ստեղծագործական ոճը և նաև պահելով ընդունված ավանդական ձևը:

Հավաքածուում առանձնակի ուշադրության է արժանի կին խեցեգործ վարպետի՝ Անիչկա Արշակյանի կողմից պատրաստված աղամանը *(ԳԳ8122)*, որի գլխի ձևը, հատկապես վրայի երկար քիթը և գլխի շուրջ խոյի եղջյուրներ հիշեցնող կորերը մեզ հնարավորություն են տալիս այն դասել կենդանակերպ-կանացիակերպ տիպին: Անիչկայի գործը հետաքրքիր է նրանով, որ, թեև նա, ինչպես շատ այլ խեցեգործներ, ստեղծել է կիրառական արվեստի նմուշ, սակայն ամբողջովին պահպանում է ավանդական ձևը:

Հավաքածուում ներկայացված կանացիակերպ աղամանների ձևավորումն ու ոճը արտացոլում են ինչպես հայ կնոջ ավանդական կերպարը՝ ազգային հագուստի ու զարդարանքի տարրերով, այնպես էլ քաղաքային կամ եվրոպական տիպի հագուստով լուծումները: Այս առումով ուշագրավ է սև կավից պատրաստված *ԳԳ8028* հաշվառանիշով կանացիակերպ աղամանը, որը պատկանում է կանացիակերպ աղամանների Շիրակյան դպրոցին և ունի նմանություններ Սպիտակի կանացիակերպ աղամաններից երկուսի հետ, որոնք նկարագրված են Կ. Բազեյանի աշխատանքում [5, էջեր 183-188]:

Աղամանների ուսումնասիրության մեջ ուշադրության է արժանի ոչ միայն դիմահայաց երեսը, այլև հետևի կողմը, որը հաճախ զարդարված է 3-7 հյուսքերով: Հյուսքերն երբեմն փոխարինվում են ալիքաձև գծերով՝ վարսերի տպավորություն թողնելու համար, իսկ որոշ դեպքերում կիրառվում է երկուսի համադրությունը *(ՓԹ452)*: Հաճախ աղամանների հետնամասում կարելի է հանդիպել հայկական տարազի զարդարանքներ՝ ծամաքաղներ և ծամթելեր *(ԳԳ8022)*: Ծամքաղը՝ արծաթյա երկտակ շղթա էր, որի եզրերից կախվում էին գնդիկներ, իսկ մեջտեղում՝ կապույտ ուլունք [4, էջ 75]: Հատուկ ուշադրության է արժանի ժողովարպետ Սահակ Սահակյանի աշխատանքը, որն աչքի է ընկնում միայն մեկ հյուսի լուծումով *(ԳԳ7892)*: Վարպետների նորարարական լուծումները նկատելի են նաև այն դեպքում, երբ վարսերը կամ ընդգծվում են առջևի կողմից, կամ ընդհանրապես չեն ընդգծվում *(ԳԳ8029, ԳԳ8024)*:

Այսպիսով՝ պատրաստման տեխնոլոգիական տարբերությունները՝ փորագրման, ճնշման կամ զարդարման մեթոդները, ցույց են տալիս, թե ինչպես են տարբեր վարպետներ մշակել իրենց յուրահատուկ ոճը՝ միևնույն ժամանակ պահպանելով ընդհա-

նուր մշակութային իմաստները։ Այս բոլոր առանձնահատկությունները նպաստում են աղամանների բազմաշերտ իմաստային և գեղարվեստական վերլուծությանը, ինչը նրանց դարձնում է ոչ միայն կիրառական իրեր, այլև մշակութային ժառանգության արժեքավոր օրինակներ։

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Կանացիակերպ աղամանները հայկական խեցեգործական մշակույթի կարևոր արտահայտություններից են։ Դրանց պատմական զարգացումը ցույց է տալիս թե ինչպես են նյութական մշակույթի տարրերը ենթարկվում սոցիալ-մշակութային և տեխնոլոգիական փոփոխությունների։ 19-20-րդ դարերի ընթացքում արևմտահայերի գաղթի հետևանքով արհեստի ներթափանցումը Արևելյան Հայաստան՝ այն ենթարկեց մշակութային աղապտացիայի՝ վերցնելով նոր միջավայրի սոցիալական և տեխնոլոգիական առանձնահատկությունները։ Տնայնագործական արհեստից վերածվելով մասնագիտացված արհեստի՝ աղամանները փոխեցին իրենց օգտապաշտական-խորհրդանշական նշանակությունը՝ հանդես գալով որպես դեկորատիվ արվեստի նմուշներ, որտեղ շեշտադրվում էր դրանց ազգային-ավանդական կողմը։

ԺԱԹ հավաքածուում ներառված աղամանները ներկայացնում են այս ժառանգության բազմազանությունը՝ ընդգծելով ավանդական և ժամանակակից վարպետների ստեղծագործական մոտեցումների տարբերությունները։

Հավաքածուն կարելի է բաժանել երկու խմբի՝ ավանդական և ժողովրդական վարպետների կողմից պատրաստված ժամանակակից տիպի աղամանների։ Ավանդական օրինակները բնորոշվում են դասական ձևերով և գործառույթային լուծումներով, մինչդեռ ժողովրդական վարպետների աշխատանքներում նկատելի են նորարարական, երբեմն՝ աբստրակտ մոտեցումներ, որոնք վկայում են ժառանգության վերաիմաստավորման և ստեղծագործական փորձերի մասին։

Թանգարանում հայկական կանացիակերպ աղամանները կազմում են հիմնական ցուցադրության կարևոր արտեֆակտներ՝ հնարավորություն տալով այցելուներին պատկերացում կազմել հայ ժողովրդի գեղարվեստական ընկալումների և ավանդույթների մասին։ Դրանք ներկայացված են կենցաղային այլ իրերի կողքին, ինչպիսիք են գործվածքը, մետաղը և փայտը՝ վերականգնելով ավանդական բնակարանի ներքին հարդարման ամբողջական նկարագիրը՝ որպես հայ ժողովրդի մշակութային ժառանգության բաղկացուցիչ մաս։

ՀԱՎԵԼՎԱԾ

ԳԳ4520

ԳԳ6621

ՓԹ452

ԳԳ9206

ԳԳ2275

ԳԳ8757

ԳԳ8754

ԳԳ8028

ԳԳ8122

ԳԳ5689

ԳԳ1975

ԳԳ1974

ԳԳ7891

ԳԳ7892

ԳԳ8022

ԳԳ9727

ԳԳ8024

ԳԳ4494(ա)

ԳԳ8029

ԳԳ 8037

Գրականություն

1. **Աբրահամյան Վ.** *Արհեստները Հայաստանում 4-18-րդ դարերում*: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1956: 283 էջ:
2. **Առաքելյան Բ.** *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ.: Հատոր 1*: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1958: 376 էջ:
3. **Առաքելյան Բ.** *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ.: Հատոր 2:* Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1964: 320 էջ:
4. **Ավագյան Ն.** *Հայկական ժողովրդական տարազը, XIXդ.-XXդ. սկիզբ*: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1983: 113 էջ:
5. **Բազեյան Կ.** *Շիրակի կանացիակերպ աղամանները* // ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Հ 24: Գյումրի: 2021: 183-190 էջեր:
6. **Բդոյան Վ.** *Հայ ազգագրություն. Համառոտ ուրվագիծ:Երևան:* ԵՀ հրատ.:1974: 288 էջ:
7. **Բդոյան Վ.** *Հայկական աղամաններ: Անահիտ դիցուհուն խորհրդանշող կանացիակերպ աղամաններ:* Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1986: 164 էջ:
8. **Բդոյան Վ.** *Զավախքի հայոց ազգագրությունը և ժողովրդական բանարվեստը*:Երևան: ԵՀ հրատ.: 2014: 752 էջ:
9. **Եգանյան Լ.** *Անիի կանացիակերպ աղամանը* // Միջազգային գիտաժողով «Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն», Երևան, 15-17 նոյեմբերի 2011 «Զեկուցումների ժողովածու»: Երևան: 2012: 301-313 էջեր:
10. **Լիսիցյան Ս.** *Զանգեզուրի հայերը*: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.:1969: 335 էջ:

11. **Խնկիկյան Օ.** *Հայաստանի հնագիտություն(Հին քարի դարից մինչև Վանի թագավորության անկումը). Ուսումնական ձեռնարկ:* Երևան: «Ասողիկ» հրատ.: 2009: 242 էջ:
12. **Հալաջյան Գ.** *Դերսիմի հայերի ազգագրությունը* // «Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ»: Հ. 5: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1973: 167-181 էջեր :
13. **Մխիթարյան Լ.** *Կավագործ կինը*, https://armenianembroidery.wordpress.com (դիտվել է՝ 02.08.2025):
14. **Նահապետյան Ռ.** *Հայոց գյուղական մշակույթի հիմնական համալիրները*: Երևան: ԵՀ հրատ.: 2022: 293 էջ:
15. **Սարգսյան Ե.** *Խեցեգործության «Ծեփածո» տեխնիկան հայերի մեջ* // «Պատմա-բանասիրական հանդես»: Հ. 2: Երևան: 1968: 203-210 էջեր :
16. **Վարդումյան Դ.** *Հայաստանի հիմնական պատմազգագրական մարզերի ընդհանուր բնութագիրը , (XIX-XXդդ.)* // «Պատմա-բանասիրական հանդես»: Հ. 2: Երևան: 2004: 48-64 էջեր :
17. **Саркисян Е.** *Гончарное искусство Армении*. АП Арм. ССР. Ереван. 1978. 93 с..

References

1. **Abrahamyan V.** "Crafts in Armenia in the 4th-18th centuries" *[Arhestnery Hayastanum 4-18-rd darerum]*, ASSR AS Publ., Yerevan, 1956, 283p.. (in Armenian)
2. **Arakelyan B.** "Cities and Crafts in Armenia in the IX-XIII centuries" *[K'aghak'nery yev arhestnery Hayastanum IX-XIII dd.]*. V.1, Yerevan, ASSR AS Publ., 1958, 376 p.. (in Armenian)
3. **Arakelyan B.** "Cities and Crafts in Armenia in the IX-XIII centuries", *[K'aghak'nery yev arhestnery Hayastanum IX-XIII dd.]*. V. 2, Yerevan, ASSR AS Publ., 1964, 320 p.. (in Armenian)
4. **Avagyan N**. "Armenian folk costume, early XIX-XX centuries" *[Haykakan zhoghovrdakan tarazy, XIXd.-XXd. skizb.]*. Yerevan, ASSR AS Publ., 1983, 113 p.(in Armenian)
5. **Bazeyan K.** The Womanlike Salt Cellars of Shirak *[Shiraki kanats'iakerp aghamannery]* // "Scientific Works" of SCAS NAS RA, Vol. 24, Gyumri, 2021, 183-190 pp.. (in Armenian)
6. **Bdoyan V.** Armenian Ethnography. A Brief Outline *[Hay azgagrut'yun. Hamarrot urvagits]*. Yerevan, YU publ., 1974, 288 p.. (in Armenian)
7. **Bdoyan V.** "Armenian Salt Cellars, Woman-shaped salt cellars symbolizing the goddess Anahit", *[Haykakan agha manner: Anahit dits'uhun khorhrdanshogh kanats'iakerp aghamanner]*. Yerevan, "Soviet writer" Publ., 1986, 164 p.. (in Armenian)
8. **Bdoyan V.** "Ethnography and Folk Art of the Armenians of Javakhk", *[Javakhk'i hayots' azgagrut'yuny yev zhoghovrdakan banarvesty]*. Yerevan, YU Publ., 2014, 752 p.. (in Armenian)
9. **Yeganyan L.** "Ani's Womanlike Salt Cellar" *[Anii kanats'iakerp aghamany]* // International Conference "Ani: Political and Civilizational Center of Medieval Armenia", Yerevan, November 15-17, 2011 "Collect Reports", Yerevan, 2012, 301-313 pp.. (in Armenian)
10. **Lisitsyan S.** "The Armenians of Zangezur" *[Zangezuri hayery]* Yerevan, ASSR AS Publ.,1969, 335p.(in Armenian)
11. **Khnkikyan O.** "Archeology of Armenia. (From the Old Stone Age to the Fall of the Kingdom of Van) ", *[Hayastani hnagitut'yun. (Hink'ari darits' minch'ev Vani t'agavorut'yan ankumy)],* Study manual, Yerevan, "Asoghik" Publ.. 2009, 242 p.. (in Armenian)
12. **Halajyan G.** "The ethnography of Armenians in Dersim"*[Dersimi hayeri azgagrut'yuny]* //Armenian Ethnography and Folklore, Materials and Studies, V.5, ASSR AS Publ., Yerevan, 1973, 167-181 pp.. (in Armenian)
13. **Mkhitaryan L.** "The Potter Woman" *[Kavagorts kiny]*. https://armenianembroidery.wordpress.com (viewed: 02.08.2025). (in Armenian)
14. **Nahapetyan R.** "The Main Complexes of Armenian Rural Culture"*[Hayots' gyughakan mshakuyt'i himnakan hamalirnery]*. Yerevan, YU Publ., 2022, 293 p.. (in Armenian)
15. **Sargsyan E.** The ""Tsepatso" Technique of Pottery Among Armenians"*[KHets'egortsut'yan «TSep'atso» tekhnikanhayeri mej]* // Historical-Philological Journal, V.2, Yerevan, 1968, 203-210 pp.. (in Armenian)

16. **Vardumyan D.** "General Characteristics of the Main Historical-Ethnographic Regions of Armenia (19th-20th Centuries) " *[Hayastani himnakan patmazgagrakan marzeri yndhanur bnut'agiry (XIX-XX dd.)]* // Historical-Philological Journal, V.2, Yerevan, 2004, 48-64 pp..(in Armenian)
17. **Sargsyan E.** "The Pottery art of Armenia" *[Goncharnoye iskusstvo Armenii]* ASSR ASPubl., Yerevan, 1978, 93p. (in Russian)

Ընդունվել է / Received on: **13. 03. 2025**
Գրախոսվել է / Reviewed on: **08. 04. 2025**
Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին
Դիանա Վարուժանի ԱԲՐԱՀԱՄՅԱՆ՝ մշակութաբանության մագիստրոս,
Հովի. Շարամբեյանի անվ. ԺԱԹ-ի գիտաշխատող-ֆոնդապահ, Երևան, ՀՀ,
էլ. հասցե՝ dianaabrahamyan.researcher@gmail.com // orcid org//0009-0008-1556-6505

Diana Varuzhan ABRAHAMYAN Master's degree of Cultural Studies,
researcher-found manager, Museum of FA named after H. Sharambeyan, Yerevan, RA,
e-mail: dianaabrahamyan.researcher@gmail.com // orcid: org//0009-0008-1556-6505